ԿԱՐԾԻՔ

Անուշ Հովիկի Մովսիսյանի ԺԲ.00.01. «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Անուշ Հովիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության հիմնախնդիրների տեսական-իրավական վերլուծությանը:

2001 թվականի դեկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-272 օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում փաստացի ներդրվեց հանրային ծառայության համակարգ, որից հետո հանրային ծառայությունը կանոնակարգող օրենսդրական-նորմատիվային դաշտը բազմիցս ենթարկվեց փոփոխությունների, որոնք հիմնականում միտված են եղել այդ համակարգի կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը: 2014 թվականից նախաձեռնված և ներկայումս ընթացող հանրային ծառայության համակարգի լայնածավալ բարեփոխումները պայմանավորված են պետության ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ, հանրային կառավարման արդյունավետության բարձրացմամբ, ինչպես նաև իրավական պետության սոցիալական, քաղաքական կայունության ամրապնդմամբ: Այս նպատակներն իրագործելու առանցքային հիմնախնդիրներից մեկը հանրային իշխանության մարմինների բնականոն գործունեությունն ապահովող, հանրային կառավարման արդյունավետության բարձրացումն երաշխավորող կառուցակարգի՝ հանրային ծառայության ինստիտուտի ստեղծումն ու զարգացումն է:

Ատենախոսության հեղինակը, կարևորելով հանրային ծառայության համակարգի կայացմանն ու կատարելագործմանն ուղղված լայնածավալ բարեփոխումների իրականացումը, այդուհանդերձ, արձանագրել է, որ ներկայումս հանրային ծառայության օրենսդրական կարգավորումներում դեռևս առկա են չլուծված հիմնախնդիրներ, որոնք ամբողջական լուծման կարիք ունեն և մեծապես վերաբերում են հանրային ծառայության համակարգի լավարկմանն ու կատարելագործմանը: Նշված հիմնախնդիրների լուծմամբ է մեծապես պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության

համակարգի լիարժեք կայացումն ու արդյունավետ գործարկումը, հետևաբար հանրային ծառայության համակարգում առկա օրինաչափությունների և հիմնախնդիրների համակողմանի հետազոտման ու համապատասխան օրենսդրական առաջարկությունների ներկայացման անհրաժեշտությամբ է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրությունը, հետազոտման արդիականությունն ու նշանակությունը:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, գիտատեսական, նորմատիվ իրավական, մեթոդաբանական անհրաժեշտ հիմքեր:

Հեղինակը ուսումնասիրել է բավարար չափով մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառ նյութերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերը, ինչը հնարավորություն է տվել անդրադառնալ խնդրո առարկա հարցադրումների և դրանց համակողմանի վերլուծության արդյունքներով առաջադրել որոշակի եզրահանգումներ: Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրերից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի ներածական մասում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական մշակվածության աստիճանը, ատենախոսական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը և գիտական նորույթը, ձևակերպվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվել է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Անուշ Մովսիսյանի «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը իրավաբանական գիտության սեփական մոտեցումների վրա հիմնված ավարտուն գիտական հետազոտություն է, շարադրված է պատշաճ գիտական մակարդակով, հետազոտությունում արված եզրահանգումները տրամաբանված են և բխում են ներածության մեջ ներկայացված խնդիրներից և նպատակներից:

Կարևորելով հետազոտական աշխատանքի գիտական արժեքը՝ այդուհանդերձ, ատենախոսության վերաբերյալ կարելի է ներկայացնել որոշ դիտողություններ՝

1.Ատենախոսության ուսումնասիրության, մասնավորապես՝ հանրային ծառայության բաղադրիչների ընտրության շրջանակը բավականին լայն է, ինչով պայմանավորված աշխատանքում ներկայացված եզրահանգումներն ու առաջարկությունները ոչ միայն մեծաքանակ են, այլև դրանք որոշ դեպքերում անհրաժեշտ չափով միմյանցից տարանջատված չեն: Կարծում ենք աշխատանքն

ավելի շահեկան կլիներ, եթե հեղինակը կենտրոնանար առավել առանցքային և հրատապ լուծում պահանջող խնդիրների վրա, ինչը հնարավորություն կտար նաև նույն այդ խնդիրները հետազոտել ավելի լայն ասպեկտներով և երաշխավորել հետազոտության ընդունելի խորություն: Նշված հիմնավորման տեսանկյունից հետազոտության առարկան կարող էր հիմնահարցերի ավելի նեղ շրջանակ ընդգրկել, իսկ հետազոտության արդյունքները կարող էին վերախմբավորվել՝ ներկայացնելով համեմատաբար փոքրաթիվ, բայց ավելի համակողմանի պատճառաբանված և հիմնավորված եզրահանգումներ և առաջարկություններ:

2. Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձրել հանրային ծառայության առանձին տեսակի՝ պետական ծառայության ձևավորման, զարգացման ընդհանուր օրինաչափությունները, վեր է հանել պետական ծառայությունը կարգավորող օրենսդրության հիմնախնդիրները և առաջ է քաշել գիտականորեն հիմնավորված լուծումներ պետական ծառայության ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ: Սակայն հեղինակը մանրամասն դիտարկել է պետական ծառայության միայն մի տեսակի՝ քաղաքացիական ծառայության կառուցակարգերը և ըստ այդմ՝ ներկայացրել է այդ կառուցակարգերի լավարկմանն ուղղված առաջարկներ: Կարծում ենք հետազոտական աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ուսումնասիրեր նաև պետական ծառայության մյուս տեսակների հիմնախնդիրները նույնպես, ինչը թույլ կտար առավել հիմնավոր և ամբողջական գնահատել հետազոտական աշխատանքի արդյունքները:

3. Հետազոտական աշխատանքի շրջանակում հեղինակը անդրադարձել է հանրային ծառայության համակարգի միջազգային փորձին, սակայն վերլուծությունն իրականացված է ոչ համակարգված ձևով: Մասնավորապես՝ դիտարկվել են մի շարք երկրների հանրային ծառայության առանձնահատկությունները և դրանց զարգացման օրնաչափությունները՝ առանց ներկայացնելու ընտրության հստակ չափանիշներ: Այդ հանգամանքը բարդացնում է միջազգային փորձի համադրելիությունը և ստացված արդյունքների կապը աշխատանքում տեղ գտած առաջարկությունների ու գիտական նորույթների հետ:

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված դիտողությունները որևէ կերպ չեն նվազեցնում կատարված հետազոտական աշխատանքի գիտական արժեքը և թեմայի հետագա ուսումնասիրությունն ավելի ամբողջական դարձնելու նպատակ են հետապնդում:

Այսպիսով՝ Անուշ Հովիկի Մովսիսյանի «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և ատենախոսության հեղինակը արժանի է հայցվող՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական

ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ **Ա. Լ. ԱՍԱՏՐՅԱՆ**

Ա. Հ. Մովսիսյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, Երևանի պետական համալսարանի իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Լ Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

02.05.2025 թ.